ԱՎ
638.2
Ա-18

01 OCT 2010

ՄԱՐԶՄԵՏԱՖՍ

ԱԳՐՈԶՈՐԿԱՆՈՆՆԵՐ

ԾԵՐԱՄԻ ՎՈՐԴԵՐԻՆ 1940 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԵՐԱԿՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

638.2
Ա-18

1940 թ. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ 1940 թ.

23.153

JAN 2013

Պատ. խ

Տեխ. խմբագիր՝ ՀՈՎ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Սրբագրիչ՝ ՀԱՄԲ. ԱՎՃՅԱՆ

Լինոտիպիստ՝ ՄՈՒՇԵՂ ԴԱՐՅԱՆ

Մարզլիտ Կ.—№ 217.

Տիրաժ 2000. *Պատվեր* № 276.

Ազպոլիգրաֆտրեստի Ստեփանակերտի տպարան

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ	**ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ**
ԱԴՐԽՍՀ ՏԵՔՍՏԻԼ ԱՐԴ. ԺՈՂԿՈՄԻ ՏԵՂ.՝ ՄՅԱԶԻՆ	**ԱԴՐԽՍՀ ՀՈՂԺՈՂԿՈՄ՝** ԱԼԻՅԵՎ
1940 թ. հունվ. 29:	**1940 թ. հունվարի 29:**

ԱԳՐՈԶՈՈԿԱՆՈՆՆԵՐ

ՇԵՐԱՄԻ ՎՈՐԴԵՐԻՆ 1940 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԵՐԱԿՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱՄԲ

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԿԵՐԱԿՐՈՒՄ

ՎՈՐԴԵՐԻ ԿԵՐԱԿՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Մինչև շերամի որդի կերակրումն սկսելը հետևյալ նյութերը պատրաստել դարակների համար և կերակրելու հատկացրած շենքերը նախապատրաստել:

1. *Աշնանը և ձմեռը, մինչև մարտ ամիսը պատրաստել յեղեգ (ղամիշ) ու չալթաններ (թարաջա) շինել դարակների վրա փռելու համար և սեփական միջոցներով նյութեր պատրաստել դարակների համար այն հաշվով, որ* 25 *գրամանոց հունդի մեկ տուփին որդերի* 5*-րդ հասակում* 40 *քառ. մետր տարածությունից պակաս չլինի:*

Սեփական շինվածքի դարակները պետք է պատրաստել փայտից և վրան փռել հյուսված յեղեգ (թարաջա) մեկ մետրից ոչ պակաս լայնությամբ: Այն ռայոններում, որտեղ յեղեգ չկա, դարակների վրա փռել ուռենու կամ այլ ծառերի ոչ պտղատու ճյուղերից շինված հյուսվածքներ, ճյուղերը պետք է չոր լինեն:

2. *Գարնանը, մարտ ամսին, որդերին կերակրելու համար անհրաժեշտ է շենքեր հատկացնել.*

ա) առաջին յերեք հասակի կերակրման համար, յեթե կոլխոզն է կերակրում, նա հատկացնում է բնակելի տան տիպի տաքացրած շենք, անհատական կարգով կերակրելիս հատկացնել բնակելի տներ,

բ) 4*-րդ և* 5*-րդ հասակների համար հատկացնել հատկապես*

չինված շերամատներ (քումեր), յեղեղնե շերամատներ, գոմեր, բնակելի տներ, դարմանանոցներ և ծայրահեղ դեպքում՝ սրահներ (չարդախներ) յեղեղնե տանիքով:

3· Կերակրմանը հատկացրած շենքերը և դրանց շրջակայքը խնամքով մաքրել, մանավանդ այնտեղ, վորտեղ հատակը հողից է, ծեփել ու հարթել այն: Մրջյունների դեմ պայքարելու համար ծեփել շերամատների բոլոր ճեղքերը, դարակների բոլոր վոտները փաթաթել մազութով թաթախած փալասներով, կամ վոտների շուրջը մոխիր ցանել:

Մկների դեմ պայքարելու թունանյութեր ստանալու համար դիմել հրահանգչին:

4· Վորդակերակրմանը հատկացրած շենքը սպիտակացնել հանդած կիրով: Շերամատների, մանավանդ անասնանոցների ու գոմերի հողե հատակներն անպայման ծածկել կրով, իսկ փոսերը լցնել ավազի հետ խառնած կրով:

Շենքերն ախտահանել վորդի կերակրումն սկսելուց տասն որ առաջ: Այնտեղ, վորտեղ կերակրման ժամանակ նկատվում է վորդերի կերակրում (հիվանդություններից հետո) կրկնակի ախտահանում կատարել կերակրումից անմիջապես հետո:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ· — Ախտահանումը և կրծողների դեմ պայքարը թույների միջոցով պետք է կատարել անպայման հրահանգչի մասնակցությամբ:

5· Ինվենտարը՝ դարակները, զամբյուղներն ու չաթանները (թարաջա) պետք է լվանալ տաք մոխրաջրով և չորացնել արևի տակ:

Այնտեղ, ուր անբավարար է ստանդարտային դարակների քանակը, չինել ու տեղադրել 2—3 հարկանի դարակներ սեփական չինվածքի, ըստ վորում փուվածքի լայնությունը 1 մետրից պակաս չպիտի լինի:

Այն գյուղերում, վորտեղ վորդերը վերջին հասակներում կերակրվում են չարդախներում, պետք է չինել ցածր, միահարկ դարակներ, բայց 20—25 սանտիմետրից վոչ ցածր, առանց վորոնց արդելվում է վորդերին կերակրել չարդախներում:

ՎՈՐԴԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ

1· Վորդերը կերակրելու համար հունդը կամ զարթեցրած թրթուները պետք է ստանալ բացառապես Շրջմետաքսից: Արդել

ժում է հունդը զարթնեցնել և վորդերը կերակրել այլ աղբյուրից ձեռք բերած հունդից կամ անային (սեփական) պատրաստած հունդից:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ· — Յեթե հայտնաբերվի արգելված հունդից վորդերի կերակրումը, վորդերն անհապաղ վոչնչացվում են և շերամապահները պատասխանատվության են յենթարկվում (տես կոնտրակտացիոն պայմանագրի 5-րդ կետը):

2· Վորդերը տեղավորելու համար 25 գրամանոց մի տուփ հունդ կերակրելու դեպքում պահանջվում են հետևյալ տարածությունները·

1-ին հասակում	—	1,5	քառ·	մետր
2-րդ	»	5,0	»	»
3-րդ	»	10,0	»	»
4-րդ	»	25,0	»	»
5-րդ	»	40,0	»	»

3· Առաջին յերեք հասակների կերակրումն անպայման պիտի կատարել հիմնական շենքերում, իսկ վերջին 4-րդ և 5-րդ հասակ ներում թույլատրվում է կերակրել թեթև տիպի շերամատներում (յեղեղնե, գոմեր, չարդախներ):

Այն լեռնային ռայոններում, վորտեղ շատ անձրևներ են գալիս, արդելվում է վորդերը կերակրել գոմերում: Բացառություն թույլ է տրվում հատկապես կառուցված կոլխոզային անասնաբակերի և գոմերի համար, նախապես չորացնելով և լավ ողափոխելով:

Դաշտային ռայոններում կերակրելիս գոմերի դռները բաց են պահվում և մուտքերից կախվում են յեղեղնե չաթաններ:

4· Քուռի մոտ գտնվող կոլխոզային շերտերում (Աղդաշի, Սամուխի, Զարդոբի և Բարդայի ռայոններում), այնտեղ, ուր շերամատները գտնվում են անտառում, շերամատների մի մասը պետք է կտրել առաջին յերեք հասակների համար, պատերը ծեփել յերկու կողմից (ներսից և դրսից) և վառարաններ դնել նորմալ ջերմաստիճան պահպանելու համար:

5· Նախալեռնային ռայոններում, վորտեղ նկատվում են ջերմաստիճանի խիստ տատանումներ (ԼՂԱՄ, Կուտկաշեն, Վարդաշեն և այլն) թեթև տիպի շերամատների պատերը պետք է սվաղել կավով՝ շենքը տաքացնելու համար:

6· Զորրորդ հասակի վորդերին տանել թեթև տիպի շերամա

տները քուն մտնելու 2-րդ օրը, իսկ ցուրտ յեղանակի դեպքում 3-րդ, 4-րդ օրը:

7. Շենքի ջերմաստիճանն առաջին յերեք հասակների համար պետք է լինի 22—24 աստիճան, իսկ 4-րդ և 5-րդ հասակների համար — 20—24 աստիճան:

Յեթե ջերմաստիճանը ցածրանում է, վորդերի առաջին հասակներում (չերամատներում) պետք է տաքացնել շենքերը, իսկ ջերմաստիճանը բարձրանալիս պետք է լուսամուտներից ու դռներից կախել թաց կտորներ, չերամատները տերեվներ բերել ու հատակին ջուր ցանել:

8. Հիմնական տիպի չերամատները պետք է որվա ընթացքում ոդափոխել 5—6 անգամ 10—15 բոպեյով: Չերամատները պետք է ավելել թաց ավլով, որական յերկու անգամից վոչ պակաս:

9. Կղմինդրե տանիք ունեցող չարդախներում կերակրելիս պետք է կղմինդրը հանել 5—6 տեղում, վորպեսզի որվա ընթացքում բավականաչափ ոդ ներս մտնի, ըստ վորում վերցրած կըղմինդրների տեղը պետք է որվա ընթացքում փոփոխել, վորպեսզի վորդերի վրա արեգակի ճառագայթներ չընկնեն: Գիշերը յեվ անձրեվի ժամանակ կղմինդրը պետք է դնել իր տեղը: Դռնատեղերը պետք է վարագուրել յեղեգնից կամ ճյուղերից շինված հյուսվածքներով:

10. 1-ին և 2-րդ հասակում, նույնպես և 3-րդ հասակի առաջին յերկու օրը վորդերին պետք է տալ կտրատած տերեվ, իսկ յերրորդ հասակի մնացած ժամանակ՝ ամբողջական տերեվ յեվ մանր ճյուղեր տերեվներով: 4-րդ և 5-րդ հասակում տերեվը պետք է տալ ճյուղերով, վորդերը կերակրել ամբողջ օրը՝ գիշեր ու ցերեկ, կերակրումների թիվն որական հասցնելով առաջին հասակներում 7—8 անգամից վոչ պակաս, վոչ մեծ բաժիններով, 4-րդ և 5-րդ հասակներում՝ 6—7 անգամ բաժիններն ավելացնելով:

Վորդերը կերակրելիս պետք է հաշվի առնել վորդերի սակա վակերության շրջանները (խորխափոխումից առաջ, խորխափոխումից հետո և բաժոժ հյուսելուց առաջ), դրա համար ել ամենամի հասակի սկզբին ու վերջին (մեկական որ) պետք է սակավ կերակրել, չփոփոխելով կերակրումների քանակը:

11. Տերեվները պետք է տալ այնպիսի չափով, վոր վորդերն ուտեն լիովին և տերեվները չմնան, վորպես փոց:

12. Կերը պետք է թարմ լինի և վոչ թաց: Վորդերին չի կարելի տալ փոչոտ, կեղտոտ տերեվներ:

Տերեվները պետք է քաղել առավոտյան և իրիկնադեմին, արեվահայաց կողմից:

Պետք է տերեվների պաշար ունենալ վորդին առավոտյան կերակրելու համար, մինչև տերեվները քաղելը: Տերեվներն ու ճյուղերը պետք է տանել վորդանոցը՝ վորդերին տալուց կես ժամ առաջ:

Ամպամած որերը տերեվները կարելի յե քաղել որվա ընթացքում:

Անձրեվի դեպքում պետք է մի որվա տերեվի պաշար ունենալ:

Անընդհատ անձրեվների դեպքում քաղած թաց տերեվները պետք է չորացնել միջանցահովում, ճյուղերը կախելով թոկից՝ տերեվները դեպի ցած:

13. Տերեվները պահելու համար պետք է գետնափորներ շինել: Քաղած տերեվները պետք է ածել չաթանների կամ թախտերի վրա՝ 10 սանտիմետր հաստությունից վոչ ավելի և հաճախ խառնել, վոր չթոչնեն: Հավաքած ճյուղերը պետք է պահել կապերով, կանգնեցրած, ճյուղերի կոթերը պետք է լինեն հատակի վրա: Կապերի մեջ ճյուղերի թիվը 15 հատից ավելի չպիտի լինի:

14. Առաջին հասակներում փռոցները պետք է փոխել հանոցներով (սյոմնիկ), յուրաքանչյուր հասակին մի անգամ քնից հետո. 4-րդ հասակում փռոցը պետք է փոխել յերկու անգամ՝ հասակի 3-րդ օրը ու քնից առաջ: 5-րդ հասակում—յերեք անգամ, յերկու անգամ հասակի ընթացքում և մեկ անգամ բոժոժ հյուսելուց առաջ:

Վերջին յերկու հասակներում փռոցները փոխել հետեվյալ կերպով. առավոտյան առաջին կերը տալուց առաջ, դարակների լայնությամբ շարվում են յերկար ցախեր՝ մեկը մյուսից մի մետրը հեռավորությամբ, վորոնց վրա դրվում է կերը՝ ճյուղերով, նախ դարակների յերկարությամբ, ապա լայնքով, և յերբ բոլոր վորդերը բարձրանան կերի վրա, ցախերի ծայրերը հին փռոցից բարձրացնել 20—25 սանտիմետր առաստաղից կախած ճյուղերից շինած չվանի ոգնությամբ, հին փռոցը հանել: Փռոցը հանելուց հետո ցախերը հանել և վորդերը վրան դտնվող ճյուղերը տեղը դնել:

Փուշը փոխելուց հետո պետք է ստուգել հանած փուշը, ջոկել նրա վրա մնացած բոլոր առողջ վորդերը, իսկ հիվանդ ու թույլ վորդերը փուշի հետ միասին այրել կամ թաղել հողում:

Անձրևային և ամպամած յեղանակներին փուշերը պետք է փոխել ավելի հաճախ, թույլ չտալով, վոր բորբոսնեն:

15. Քնի ժամանակ վորդերին չպետք է անհանգստացնել կերակրելով, իսկ չքնած վորդերին պետք է զգուշությամբ կերակրել, դնելով կերն այն տեղերը, վորտեղ վորդերը քնած չեն:

Արթնացած վորդերին պիտի վերցնել, փոխադրել առաջուց պատրաստած ազատ տեղերն ու կերակրել:

16. Կերը պետք է դնել դարակների վրա՝ նրա ծայրերից 5—10 սանտիմետր ներս, վոր վորդերը հատակին չընկնեն:

17. Յեթե հայտնաբերվեն հիվանդ վորդեր, կերակրելու ժամանակ անհապաղ անջատել հիվանդ վորդերին, փուշը փոխել և միաժամանակ հաղորդել տեղամասային հրահանգչին:

Փուշը հիվանդ ու սատկած վորդերի հետ միասին զգուշությամբ դնել կողովի կամ քսակի մեջ, անհապաղ դուրս հանել վորդանոցից, այրել կամ 0,5 մետր խորությունից վոչ պակաս փոսի մեջ թաղել: Փուշը փոխելիս թույլ չտալ, վոր վորդերը փուշից ընկնեն հատակին: Վարակված դարակները լավ մաքրել և լվանալ տաք մոխրաջրով: Յեթե կերակրվող վորդերը սաստիկ վարակված են, առանձնացնել առողջ վորդերին և փոխադրել մի ուրիշ շենք:

Հիվանդ վորդերին հավաքելուց հետո պետք է ձեռքերն անպայման լվանալ սապոնով:

Արգելվում է հիվանդ ու սատկած վորդերով կերակրել ընտանի թռչուններին, նույնպես յեվ վարակված շերամատնից գընալ չվարակվածը:

18. Կեր բերելու զամբյուղներում չի կարելի դնել հանած փուշը, ուստի պետք է ունենալ առաջուց պատրաստած քսակներ կամ զամբյուղներ փուշերը դուրս տանելու և կերը բերելու համար, այդ տարաները պետք է պահել առանձին (շերամատներից դուրս):

19. Փուշից վերցրած ճյուղերն արգելվում է պահել շերամատների մոտ:

ՇԱԽԵՐ, ԲՈԺՈԺՆԵՐԻ ՀՅՈՒՍՈՒՄԸ ՅԵՎ ԲԵՐՔԻ ՀԱՎԱՔՈՒՄԸ

1. Շախերը պետք է պատրաստել խոտերից՝ սարի-ծիծաղից (Թյուրֆադ), կըշըլ-չոփից, սպիտակ առվույտից, սալմայից և այլ խոտերից, վոր հոտ ու փշեր չունեն:

Շախերը պիտի պատրաստել 4-րդ հասակի վերջում և չորացնել չվաքում: Շախերի համար չի կարելի գործադրել ծառերի ճյուղեր, բացառությամբ այն ռայոնների, վորտեղ 10 կիլոմետրի վրա խոտ չկա:

2. Բոլոր դեպքերում արգելվում է գործածել ղարաղաջի յեվ թթենու փուշերից մնացած ճյուղերից շինած շախեր:

Շախերի բարձրությունը մեկ մետրից ավելի չպիտի լինի:

3. Շախերը պետք է դասավորել ժամանակին և թույլ չտալ, վոր շերամը ժամանակ կորցնի շախեր վորոնելու համար յեվ բոժոժ հյուսի փուշում:

4. Շախերը պետք է դասավորել դարակների վրա հենց վոր վորդերը հասունանան՝ 5-րդ հասակի 7–9-րդ որը, համաչափ, շարքերով և կանգուն դրությամբ, շարքերի միջև 0,3 մետրից վոչ պակաս տարածություն թողնելով, բոժոժ չհյուսող վորդերին կերակրելու համար, բավականին քանակությամբ պիտի շախեր լինեն, վորպեսզի յեկվորյակներ և այլանդակներ չլինեն:

Արգելվում է վորևէ բանով ծածկել շախերը, յերբ վորդերը բոժոժ են հյուսում:

5. Բոժոժ չհյուսող վորդերին պիտի շարունակել կերակրել, կերը տալով զգուշությամբ՝ տերևներով կամ մանր ընձյուղներով, բոժոժ հյուսող վորդերին չանհանգստացնելով: Բոժոժ հյուսելն սկսելուց յերեք որ հետո պետք է ջոկել բոժոժ չհյուսող վորդերին և առանձին կերակրել:

6. Շախերից բոժոժները պետք է հավաքել Բաղդադի տեսակինը՝ 9 որից վոչ առաջ և Հիբրիդայինը՝ 8 որից վոչ առաջ, հաշված այն ժամանակից, յերբ վորդերը մասսայորեն բարձրանում են շախերը: Բոժոժը պետք է հավաքել հրահանգչի թույլտվությամբ:

7. Շախերից բոժոժի բերքը հավաքելիս բոժոժները պետք է մաքրել կիսահյուսված և սև չհաս բոժոժներից և միաժամանակ

տեսակավորել ըստ գույնի և գրուպաների, առանձնացնելով բծավոր ու կիսահյուսված բոժոժները։

Ըստ գույնի, գրուպաների խոտանած և սեվ չխար բոժոժները հանձնել գնման կետին առանձին-առանձին, բերքը հավաքելուց հետո մի օրից վոչ ուշ։

8. Բոժոժները հավաքելու ժամանակ չախերը և հավաքած բոժոժները պետք է ստվերում պահել։

9. Բոժոժները պետք է հասցնել գնման կետին կողովներում։ Մի կողովում 30 կիլոգրամ բոժոժից ավելի չպիտի լինի։

ԹԹԵՆՈՒ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

1. 1-ին և 2-րդ հասակների համար պետք է պոկել թթենու բնի ճյուղերի և կողքի ճյուղերի տերևները մինչև գագաթը։

3-րդ հասակի համար պետք է կտրել բոլոր կողքի և բնի ընձյուղները մինչև գագաթի ձևավորման տեղը։

Վորդերին մինչև 3-րդ հասակը կերակրելու համար կողքի և բնի ընձյուղները չբավականացնելու դեպքում, թույլ է տրվում ոգտագործել թե գագաթի ճյուղերը և թե մատղաշ ընձյուղները, սակայն յուրաքանչյուր ճյուղի մեկ յերրորդական մասից վոչ ավելի, կտրելով դրանք ներքևից դեպի վեր։

2. 4-րդ և 5-րդ հասակի վորդերի համար պետք է կտրել թթենու տերևակալած ճյուղերն այնպես, վոր ոգտագործվող ծառը մաքրվի ճյուղերից ու տերևներից, միաժամանակ տալով համապատասխան ճիշտ ձևավորում։

3. Յեթե կոլխոզը կամ առանձին շերամապահներ ունեն թթենու, թումաչարի, խիավանի բարձրաբուն ծառեր, դրանց տերևները կարելի յե ոգտագործել առաջին յերեք հասակների վորդերին կերակրելու համար։ Միայն խիավան ունենալու դեպքում դրանց տերևները կարելի յե ոգտագործել վորդերի բոլոր հասակներում։ Ճյուղերը պետք է կտրել առանց փչացնելու խաղողի վազերը։

4. Թթենու բգական տեսակները պետք է ոգտագործել առաջին հերթին։

Յեթե գարունն անձրևային և ցուրտ է, այն ռայոններում, վորտեղ ճյուղերը փթախտով (սոլմա) հիվանդ են, առաջին հերթին պետք է ոգտագործել թթենու արու տեսակների տերևները։

5. Մատղաշ բազմաբունցք թթենու տերևն ոգտագործելու դեպքում, 4-րդ հասակի և 5-րդի սկզբում վորդերին կերակրելու համար առաջին հերթին պետք է կտրել բունցքի հիմքի ավելորդ ընձյուղները, թողնելով հիմնական ճյուղերը։ 5-րդ հասակի վերջում պետք է կտրել ողակաձև բոլոր մնացած ճյուղերը, թողնելով 25—30 սանտիմետր գագաթի համար։

6. Այն ծառերը, վորոնք յենթակա յեն ջահելացման, կերակրումների ժամանակ պետք է ոգտագործել լիովին և առաջին հերթին։

7. Փոշոտ ճանապարհների վրա գտնվող ծառերը պետք է ոգտագործել առաջին հերթին։ Այդ ծառերի տերևները հինգերորդ հասակի համար ոգտագործելիս պետք է լվանալ հոսող մաքուր ջրում, լվանալուց հետո թափ տալ և չորացնել միջանցահովում։

8. Ճյուղերը պետք է կտրել ողակաձև, թույլ չտալով վոչ մի ծառում կտրվածքի տեղերում, նույնպես և ճյուղերի կոտրատում և կեղևի պոկում։

Ճյուղերը պետք է կտրել այգու դանակով, այգու մկրատով, այգու սղոցով և ցաքատով։

ԿՐԿՆԱԿԻ ԿԵՐԱԿՐՈՒՄՆԵՐ

Վորդերի կերակրմանը հատկացվող շենքերը պետք է այնպես լինեն, վորտեղ կարելի լինի պահանջվող ջերմաստիճանը պահել։

1. Գարնանային կերակրումները վերջանալուց անմիջապես հետո պետք է շենքերը և ինվենտարը մաքրել ու լվանալ և ախտահանել չորս տոկոսային ֆորմալինով։

Արգելվում է վորդերը տեղավորել կեղտոտ ու չախտահանված շենքերում և գործածել չախտահանված նյութեր ու ինվենտար։

2. Շերամատների շուրջը պետք է խնամքով մաքրել գարնան կերակրումներից մնացած կեղտից ու մնացորդներից։

3. Կրկնակի կերակրման վորդերին հատկացրած տարածությունը հունդի մեկ տուփի համար պետք է լինի․

1-ին	հասակի	համար —	3	քառ․	մետր․
2-րդ	»	»	6	»	»
3-րդ	»	»	15	»	»
4-րդ	»	»	30	»	»
5-րդ	»	»	45	»	»

4· Վորդերի կերակրումը պետք է կատարել 1 և 2 հարկանի դարակների վրա (ստանդարտային և սեփական շինվածքի)։

5· Շերամատների ջերմաստիճանը պետք է 26 աստիճանից ավելի չլինի։ Թույլ չտալ, վոր շերամատներում բարձր ջերմաստիճան լինի։ Ջերմաստիճանը բարձրանալու դեպքում կանոնավորել այն, ինչպես դարնանային կերակրման ժամանակ։

6· Որվա շատ ժամանակ դռներն ու լուսամուտները փակ պահել, իսկ վոչ շոգ ժամանակ բաց պահել և բացվածքները վարագուրել։

7· Նկատի առնելով, վոր մեզ մոտ շերամատներում առայժմ չկան խոնավաչափներ, ապա հանձնարարվում է խոնավությունը վորոշել փոռոցի դրությամբ։

Նորմալ խոնավության դեպքում փոռոցը պետք է լինի վոչ շատ չոր և վոչ էլ խոնավ (շատ չոր փոռոցը մատերով չփչելիս փոշի յե դառնում)։

Խոնավության չեղման դեպքում պետք է այն կարգավորել դարնանային կերակրումների որինակով։

8· Առաջին յերեք հասակներում վորդերին պետք է կերակրել որական (ցերեկ ու գիշեր) 12 անգամից վոչ պակաս, իսկ վերջին հասակներում 10 անգամից վոչ պակաս, թարմ տերևով։

9· Շոգ ժամանակ տերևը պետք է քաղել ծառի վոչ արևվա հայաց կողմից։

Գիշերային կերակրումների համար տերևը պետք է քաղել յերեկոյան և պահել բարդաններում կամ քթոցներում։

10· 1-ին և 2-րդ հասակների համար տերևը պետք է քաղել թթենու մատղաշ ընձյուղներից։ Վորդերին պետք է կերակրել ամբողջակի (չկտրատած) տերևով։

11· Կերակրելիս պետք է հաշվի առնել վորդերի քիչ ուտելու շրջանները (խորնամոխությունից առաջ ու հետո և բժոժ հյուսելուց առաջ), ուստի յուրաքանչյուր հասակի սկզբին ու վերջին մեկական որ վորդերին պետք է սակավ կերակրել։ Ըստ վորում կերակրումների քանակը չի փոխվում, բայց ավելի քիչ չափով տերևի է տրվում։

12· Փոքր հասակներում կերակրելիս տերևը մի շերտով պիտի դնել, վոր վորդերի կորուստ չլինի։

13· Քնի շրջանում արթնացած վորդերին անպատճառ պիտի

անջատել (վերցնել նրանց տերևի հետ միասին), փոխադրել առաջուց պատրաստած ազատ տեղը և կերակրել։

Փոռոցը պետք է փոխել այնպես, ինչպես դարնանային կերակրման ժամանակ։

14· Արդելել նախորդ կերակրումների ժամանակ բանեցրած փռելու թղթերի, հանոցների և շախերի դործադրումը։

15· Շախերը պետք է պատրաստել 4-րդ հասակի սկզբին։

16· Բոժոժ հյուսելիս անպայման պետք է փոխել փռոցը։

17· Շախերը պետք է դասավորել հինդերորդ հասակի 7-րդ և 8-րդ որը· դասավորման տեխնիկան նույնն է, ինչ վոր դարնանը։

18· Բոժոժ հյուսելիս հետ մնացող վորդերին պետք է առանձնացնել մասսայական բոժոժահյուսման 2-րդ որը, փոխադրել ուրիշ տեղ և կերակրել։

19· Բոժոժ հյուսելիս ջերմաստիճանը պետք է լինի 22—23 աստիճան։ Շատ յերաշտոտ յեղանակի դեպքում հատակը, յեթե տախտակից է, հաճախ լվանալ ջրով, իսկ յեթե հողից է՝ ջուր ցանել և կախել թաց կտորներ։

Հով ժամանակ լուսամուտներն ու դռները բաց պահել, բայց նրանց բացվածքներից կախել մաքուր կտորներ, թուղթ կամ յեղեղնե հյուսվածք։

20· Բոժոժի բերքը պետք է հավաքել վորդերի մասսայորեն շախերը բարձրանալու 7-րդ և 8-րդ որը։

Շախերից կոկոնները հավաքելիս բոժոժները մաքրել սեվ չիարից և միաժամանակ ջոկջկել ըստ դույնի և դրուպաների, նաև անջատել բծավոր ու լիովին չհյուսված բոժոժները։ Բոժոժներն ըստ դույնի, դրուպաների, բրակն ու սև—չիարը հանձնել գնման կետերին առանձին-առանձին։

ԿՐԿՆԱԿԻ ԿԵՐԱԿՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵՐԵՎՆԵՐԻ ՔԱՂԵԼԸ ՅԵՎ ՊԱՀՊԱՆԵԼԸ

1· Տերևը քաղել վաղ առավոտյան և իրիկնադեմին։

2· Առաջին հասակների վորդերին կերակրելու համար տերևները քաղել կողքերի ճյուղերից, իսկ բավականություն չանելու դեպքում՝ սաղարթի ճյուղերից, քաղված տերևների վրա

անպայման թողնելով կոթի կեսը և բացի դրանից՝ ընձյուղների վրա 4—5 վերին տերևներ։

3. Չորրորդ և հինգերորդ հասակների վորդերին կերակրելու համար տերև քաղել այն ծառերից, վորոնք չեն ոգտագործվել գարնանը։

4. Գարնանն ոգտագործված թթենուց տերևները քաղելիս չի կարելի կտրել սաղարթի հիմնական ճյուղերը, այդ դեպքում տերևը պոկել կամ քաղել ճյուղերից՝ կտրելով բունի տունկերը, կամ կտրել խիտ սաղարթի ավելորդ ճյուղերը, վորոնք աճել են գարնան հատումից հետո։

5. Աշնանային կերակրման վերջին թույլ է տրվում պոկել տերևները ճյուղերից։ Տերևները պետք է պոկել զգուշությամբ, այնպես վոր կեղևը և չբացված պտուկները չպոկվեն։

6. Գարնանը չոգտագործված ծառերից թույլ է տրվում ճյուղերը կտրել միայն ամառային կերակրումների համար։

7. Գարնանը չոգտագործված թոխմաչարի տերևը կարելի յե գործադրել ամառային կերակրումների համար, ողակաձև կտրելով ծառաբնի, բոլոր ճյուղերի և սաղարթի ճյուղավորման հիմքի տերևակալած ճյուղերը։

8. Թոխմաչարը յերկրորդ անգամ ոգտագործելիս, տերևը պետք է պոկել աճող ճյուղի ներքևի մասից, ձեռք չտալով վերևի մասին։

9. Քաղած փոշոտ տերևները պետք է լվանալ հոսող մաքուր ջրի մեջ (առվի կամ ջրհորի (քյահրիզի) ջրով, լվանալուց հետո լավ թափ տալ ջուրը և չորացնել միջանցահովում։

10. Ամառային կերակրման համար քաղած տերևը պետք է պահել մութ, հով շենքում, ածելով բարդանների կամ քթոցների մեջ՝ 20 սանտիմետրից վոչ ավելի շերտով։

11. Աշնանային կերակրումների համար տերևների պահելը չոր ժամանակ այնպես է, ինչպես ամառը, բայց 4-րդ և 5-րդ հասակներում, յեթե ոդի ջերմաստիճանը ցածր լինի և անձրևներ տեղան, ապա տերևը պետք է պահել ինչպես գարնանային կերակրման ժամանակ։

12. Աշնանային կերակրումների համար վորդանոցները պետք է պատրաստել ամառային կերակրումները վերջացնելուց անմիջապես հետո, իսկ ամառային կերակրում չկատարած ռա-

յոններում ու գյուղերում՝ կերակրումը սկսելուց 10—15 որ առաջ։

13. Դարակները դնելիս չերամատներում տեղ թողնել վառարանների համար, դարակներից 1—1,5 մետր հեռավորությամբ, իսկ այնտեղ, վորտեղ բուխարի կա, դարակները դնել բուխարուց մեկ մետր հեռավորության վրա։

14. Ցրտելու դեպքում պետք է վառարաններն ու բուխարիները վառել և ջերմաստիճանը շարունակ պահել 25—26 աստիճան։

Վորդերի խնամումը և կերակրումների քանակն այնքան պետք է լինի, ինչ վոր ամառային կերակրումների ժամանակ։

15. Ծախերը պետք է պատրաստել վորդերի յերկրորդ հասակում։

16. Բերքի հավաքումը և բոժոժի հանձնումը կատարվում է այնպես, ինչպես և գարնանը։

ՀՀ Ազգային գրադարան
NL0301351

23.153
40355